Republic of Armenia
Ministry of Culture
**YEREVAN STATE MARIONETTES THEATRE**

Республика Армения
Министерство культуры
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ТЕАТР МАРИОНЕТОК**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԵՐԵՎԱՆԻ ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ**

43 Mashtots Ave, Yerevan 0009, RA ՀՀ Երևան 0009, Մ. Մաշտոցի պող. 43, РА, Ереван 0009, пр-т М. Маштоца 43
(+374 10) 562 450, (+374 10) 560 491, art-info-art@yandex.ru

N 12
« 06 » մարտ 2015թ

Կազմակերպության տնօրենին

ԱԷ-ՇՀԱՊՁԲ-11-8/01 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության "Խամաճիկների պետական թատրոն" ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր Ընկերության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Հայտերը կբացվեն "Խամաճիկների պետական թատրոն" ՊՈԱԿ-ում, ք.Երևան, Մաշտոցի 43 հասցեում, մարտի 17-ին, ժամը 12$^{00}$-ին: Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԱԷ-ՇՀԱՊՁԲ-11/8/01ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ: Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ(լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Թատրոնի տնօրեն
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Էլբակյան